Հավելված

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2020թ. մայիսի 26-ի թիվ 13/2 որոշմամբ

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Գ.Գ.Գևորգյան
«26» մայիսի 2020թ.

ԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎՈՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2020-2021 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) առկա ուսուցման ձևով մագիստրատուրայի 2020-2021 ուսումնական տարվա ընդունելության կարգն ու պայմանները:

2. Սույն կարգի իրավական հիմքերն են՝ Հայաստանի Հանրապետության օրենքները, կառավարության որոշումները, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը», ԵՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտերը:

2. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

3. Առկա ուսուցման ձևով ԵՊՀ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել Հայաստանի Հանրապետության պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող շրջանավարտները:

Մագիստրատուրայում օտարերկրյա քաղաքացիների ընդունելությունը կատարվում է հարցազրույցի անցկացման ձևով, դրա արդյունքների հիման վրա:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով ձևավորվում է ընդունող հանձնաժողով՝ ԵՊՀ ռեկտորի նախագահությամբ: Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ հումանիտար և հասարակագիտական մասնագիտությունների ու բնական և ճշգրիտ մասնագիտությունների գծով պրոռեկտորները, ուսումնամեթոդական վարչության պետը և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի ներկայացուցիչը:

Մագիստրատուրայի ընդունելության հայտերն ուսումնասիրելու, քննությունների արդյունքներն ամփոփելու և դիմորդի ընդունելության վերաբերյալ եզրակացություն տալու նպատակով ԵՊՀ ռեկտորի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով՝ համապատասխան պրոռեկտորի նախագահությամբ: Հանձնաժողով կազմում ընդգրկվում են ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետը, ֆակուլտետների դեկանները և ուսումնամեթոդական վարչության մագիստրատուրայի բաժնի աշխատողները:

Ընդունելության քննությունների անցկացման նպատակով ԵՊՀ պրոռեկտորների հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ, որոնց կազմում ներգրավվում են տվյալ ֆակուլտետի դեկանը, համապատասխան մագիստրոսական

կրթական ծրագրերի ղեկավարները և ընդունող հանձնաժողովի ներկայացուցիչը (ըստ անհրաժեշտության):

5. ԵՊՀ մագիստրատուրայում ընդունելությունը կատարվում է երկու փուլով:

6. Մագիստրատուրայի ընդունելության **առաջին փուլի** փաստաթղթերն ընդունվելու են առցանց՝ https://admission.ysu.am/ կայքի միջոցով ընթացիկ տարվա հունիսի 5-ից մինչև հուլիսի 6-ը: Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա հուլիսի 8-ից 9-ը, իսկ անվճար և վճարովի ուսուցման համակարգերի մրցույթն իրականացվելու է ընթացիկ տարվա հուլիսի 10-ին:

6.1. **Ընդունելության առաջին փուլում անվճար և վճարովի ուսուցման համակարգի** ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման ձևերի տվյալ մասնագիտության վերջին երեք տարվա շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 և բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) կազմում է առնվազն 13: Դիմորդների ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային հիմունքներով՝ մանդատային հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Դիմորդների հավասար ՄՈԳ-ի առկայության դեպքում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափորոշիչները.

ա. գերազանցության դիպլոմի առկայությունը,

բ. ամփոփիչ ատեստավորման արդյունքները:

ԵՊՀ-ում միայն մագիստրատուրայի կրթական ծրագրով գործող մասնագիտություններով («Տեղեկատվական համակարգեր» («Տեղեկատվական համակարգերի մշակում», «Տեղեկատվական համակարգերի կառավարում»), <<Վիճակագրություն>> (Կիրառական վիճակագրություն և տվյալների գիտություն), «Կրթական գիտություններ» («Կրթության կազմակերպում»), «Հայագիտություն» («Հայագիտություն», «Սփյուռքագիտություն»), «Եվրոպագիտություն», «Հասարակայնության հետ կապեր» և «Մարդկային ռեսուրսների կառավարում» ու «Ցեղասպանագիտություն» կրթական ծրագրերով, անվճար ուսուցման համակարգում ընդունելությունը կատարվում է բացառապես քննության արդյունքների հիման վրա, մրցութային կարգով և դրան կարող են դիմել միայն այն ԵՊՀ շրջանավարտները, ովքեր ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 13 և բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների միջին որակական գնահատականը (ՄՈԳ-ը) կազմում է առնվազն 13:

6.2. **Ընդունելության առաջին փուլում՝**

ա) «Աստվածաբանություն» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Աստվածաբանություն» մասնագիտության «Աստվածաբանություն» և «Եկեղեցաբանություն» կրթական ծրագրերի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

բ) «Հնագիտություն» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Պատմություն» և «Մշակութաբանություն» մասնագիտության շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

գ) «Հաշվապահական հաշվառում և հարկում» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Տնտեսագիտություն» և «Ֆինանսներ» մասնագիտության շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

դ) «Միջմշակութային հաղորդակցություն (գերմաներեն լեզու, ֆրանսերեն լեզու, իսպաներեն լեզու, իտալերեն լեզու)» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Օտար լեզու և գրականություն» մասնագիտության շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

ե) «Գերմեծ ինտեգրալ սխեմաներ» մագիստրոսական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Ռադիոֆիզիկա» մասնագիտության «Գերմեծ ինտեգրալ սխեմաների նախագծում» մասնագիտացման շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

զ) «Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ» մասնագիտությամբ շրջանավարտներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Ինֆորմատիկա (Համակարգչային գիտություն)» մասնագիտությամբ՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,<<Տեղեկատվական տեխնոլոգիաներ>> մասնագիտության անվճար համակարգի մրցույթին կարող են մասնակցել «Մաթեմատիկա: Համակարգչային գիտություններ» և «Ինֆորմատիկա (Համակարգչային գիտություն)» մասնագիտությամբ բակալավրիատի շրջանավարտներն իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

է) «Ֆարմացիա» մասնագիտությամբ անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Դեղագիտություն» և «Դեղագործական քիմիա» մասնագիտության ԵՊՀ շրջանավարտները, իսկ վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Դեղագիտություն», «Դեղագործական քիմիա» մասնագիտության և հարակից մասնագիտությունների շրջանավարտները: Հարակից մասնագիտությունների ցանկը հաստատում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական խորհուրդը,

ը) «Իրավագիտություն» մասնագիտությամբ անվճար կամ վճարովի ուսուցման համակարգերով ընդունելության մրցույթին կարող են մասնակցել միայն «Իրավագիտություն» մասնագիտությամբ իրավագիտության բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները,

թ) «Օտար լեզու և գրականություն» մասնագիտությամբ «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել նաև «Միջմշակութային հաղորդակցություն՝ ռուսաց լեզու» մասնագիտությամբ բակալավրի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

ժ) «Մանրէաբանություն և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ինչպես կենսաբանության, այնպես էլ կեսաքիմիա մասնագիտության բակալավրի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

ի) «Կիրառական մանրէաբանություն» կրթական ծրագրի անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Կենսաբանություն» և «Կենսաքիմիա» մասնագիտությունների բակալավրի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

լ) «Զբոսաշրջություն» մասնագիտության անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել «Սերվիս» մասնագիտության շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ,

խ) «Լեզվաբանություն» մասնագիտության «Կիրառական լեզվաբանություն» կրթական ծրագրի անվճար տեղերի մրցույթին կարող են մասնակցել ինչպես «Միջմշակութային հաղորդակցություն՝ անգերեն լեզու» մասնագիտության, այնպես էլ՝ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության բակալավրի շրջանավարտները՝ իրենց ՄՈԳ-ի հաշվառմամբ:

7. Մագիստրատուրայի ընդունելության **երկրորդ փուլի** փաստաթղթերն ընդունվելու են առցանց՝ ընթացիկ տարվա հուլիսի 13-ից մինչև օգոստոսի 24-ը (https://admission.ysu.am/ կայքի միջոցով): Ընդունելության քննությունները անցկացվելու են ընթացիկ տարվա օգոստոսի 26-28-ը, իսկ անվճար և վճարովի ուսուցման համակարգերի մրցույթն իրականացվելու է ընթացիկ տարվա օգոստոսի 31-ին:

7.1. **Ընդունելության երկրորդ փուլում անվճար ուսուցման համակարգի** ընդունելությունը կատարվում է միայն բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում, որին կարող են մասնակցել ԵՊՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի որակավորում ունեցող, ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները:

Այս փուլով ընդունելությունը կատարվում է առանց ընդունելության քննության, մրցութային կարգով՝ հիմք ընդունելով դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ը: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մանդատային հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

7.2. Ընդունելության անվճար ուսուցման համակարգի մրցույթից դուրս մնացած ՀՀ Ազգային բանակում ծառայած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները **տվյալ մասնագիտությամբ** վճարովի ուսուցման համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության, բացառությամբ «Իրավագիտություն» մասնագիտության, որտեղ ընդունելությունը կատարվում է հարցազրույցի արդյունքների հիման վրա:

7.3. **Ընդունելության երկրորդ փուլում վճարովի ուսուցման համակարգի** ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ԵՊՀ-ի և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված (ինստիտուցիոնալ հավատարմագրում անցած) ոչ պետական բուհերի (առկա և հեռակա ուսուցման ձևերի) շրջանավարտները:

ԵՊՀ 13 և բարձր ՄՈԳ ունեցող դիմորդների ընդունելությունը ԵՊՀ տվյալ մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է առանց ընդունելության քննությունների՝ բացառությամբ սույն կարգի 6.1 կետում նշված մասնագիտությունների:

13-ից ցածր ՄՈԳ ունեցող դիմորդների ընդունելությունը տվյալ մասնագիտության վճարովի ուսուցման համակարգում կատարվում է մրցութային հիմունքներով՝ տվյալ մասնագիտության բակալավրի կրթական ծրագրին համապատասխան հարցաշարով անցկացված քննության արդյունքների հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Ընդունելության երկրորդ փուլով մագիստրատուրայի վճարովի ուսուցման համակարգ ընդունվելու համար կարող են դիմել նաև առաջին փուլին մասնակցելու իրավունք ունեցող, սակայն դիմելու ժամկետը բաց թողած դիմորդները:

Մագիստրատուրայի անվճար ուսուցման համակարգի ընդունելության պահանջներին բավարարող դիմորդները վճարովի ուսուցման համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:

8. Մասնագիտության փոփոխության դեպքում ԵՊՀ կամ այլ բուհերի շրջանավարտների, ինչպես նաև ՀՀ զինված ուժերում պարտադիր զինվորական ծառայություն անցած և երեք տարուց ավելի վաղ զորացրված դիմորդների մագիստրատուրա ընդունելությունը կատարվում է միայն վճարովի ուսուցման համակարգում՝ տվյալ մասնագիտության բակալավրի ծրագրին համապատասխան կազմված հարցաշարով անցկացված քննության արդյունքներով:

Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ հիմք ընդունելով առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունները:

9. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդները պարտավոր են 15-օրյա ժամկետում վճարել ուսման վարձավճարը (1-ին փուլում ընդունվածները մինչև ընթացիկ տարվա հուլիսի 25-ը, 2-րդ փուլում ընդունվածները մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 16-ը), որից հետո կատարվում է նրանց հրամանագրումը՝ ըստ մասնագիտությունների և մագիստրոսական ծրագրերի:

3. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

10. Մագիստրատուրայի ընդունելության համար դիմորդները պետք է մուտքագրեն և սքանավորեն հետևյալ փաստաթղթերը.

ա) մագիստրատուրայի ընդունելության լրացված դիմում-հայտ, որում դիմորդը, ըստ նախապատվության, կարող է նշել առավելագույնը 2 մագիստրոսական ծրագիր: Նշված առաջին ծրագրի չբացվելու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին (մագիստրոսական ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերի» 1-ին կետի պահանջներին):

բ) բարձրագույն կրթության դիպլոմի և հավելվածի բնօրինակները,

գ) 2 հատ լուսանկար (3x4 չափի),

դ) զինվորական գրքույկի բնօրինակը (առկայության դեպքում),

ե) անձնագիրը,

զ) ընդունելության ծառայությունների համար գանձվող 1000 դրամի վճարման անդորրագիրը:

11. Ընդունելության հրամանը ստանալուց հետո համապատասխան ֆակուլտետի գործավարը տպում է ուսանողի առցանց մուտքագրած փաստաթղթերը և կազմում է ուսանողի համար անձնական գործ: